ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Ե՞րբ է սկսվել Ֆրանսիական մեծ հեղափոխությունը.

1) 1804 թ.
2) 1792 թ.
3) 1798 թ.
4) 1789 թ.

2 Ե՞րբ է Ռուսաստանում տապալվել ցարական միապետությունը.

1) 1917 թ. հոկտեմբեր
2) 1918 թ. փետրվար
3) 1917 թ. փետրվար
4) 1905 թ. հունվար

3 Ո՞ր թվականին է ստեղծվել Լատինական կայսրությունը.

1) 1147 թ.
2) 1220 թ.
3) 1198 թ.
4) 1204 թ.

4 Ո՞ր թվականին է առաջացել Ֆրանկական թագավորությունը.

1) 500 թ.
2) 551 թ.
3) 800 թ.
4) 962 թ.

5 Ե՞րբ է ստեղծվել ՄԱԿ-ը.

1) 1949 թ.
2) 1945 թ.
3) 1943 թ.
4) 1955 թ.

6 Ե՞րբ է տեղի ունեցել Մարաթոնի ճակատամարտը.

1) Ք.ա. 490 թ.
2) Ք.ա. 190 թ.
3) Ք.ա. 331թ.
4) Ք.ա. 218թ.

7 Ե՞րբ է գահակալել Տրայանոս կայսրը.

1) 161-180 թթ.
2) 54-68 թթ.
3) 98-117 թթ.
4) 41-54 թթ.

8 **Ո՞վ էր ԱՄՆ-ի առաջին նախագահը՝**

1) Թեոդոր Ռուզվելտ
2) Թոմաս Ջեֆերսոն
3) Ջորջ Վաշինգտոն
4) Աբրահամ Լինկոլն

9 **Թվարկվածներից ո՞ր պետությունը Առաջին աշխարհամարտի սկսվելու պահին չէր մտնում Եռյակ դաշինքի կազմի մեջ.**

1) Գերմանիա
2) Ավստրո-Հունգարիա
3) Իտալիա
4) Բուլղարիա

10 **Ո՞վ էր Փահլավիների արքայատոհմի հիմնադիրը.**

1) Ռեզա
2) Աղա Մոհամմադ
3) Մոհամմադ Խիաբանի
4) Նադիր

11 **Ո՞վ էր միացյալ Եգիպտոսի առաջին արքան.**

1) Էխնաթոն
2) Թութմոս
3) Մինա
4) Ջոսեր

12 **Ո՞րն էր Խեթական պետության մշտական մայրաքաղաքը.**

1) Իսոս
2) Խաթթուսաս
3) Ախետաթոն
4) Կարքեմիշ

13 **Ո՞ր իշխանի օրոք է Հին Ռուսիան ընդունել քրիստոնեությունը.**

1) Դմիտրի
2) Օլեգ
3) Վլադիմիր
4) Յարոսլավ

14 **Ո՞ւմ գործունեությամբ է սկսվել Ռեֆորմացիան.**

1) Ժան Կալվին
2) Էրազմ Ռոտերդամցի
3) Թոմաս Մոր
4) Մարտին Լյութեր

15 **Ի՞նչ էր կոչվում ժողովրդական ժողովը Հին Սպարտայում.**

1) էկլեսիա
2) ապելլա
3) արեոպագոս
4) գերուսիա

16 **Միջնադարում ի՞նչ էին անվանում քաղաքային դասի հարուստների խավին.**

1) կռվողներ
2) աղոթողներ
3) ասպետներ
4) բյուրգերներ

17 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Դիրեկտորիայի հաստատումը Ֆրանսիայում
բ. ԱՄՆ Սահմանադրության գործողության մեջ մտնելը
գ. Անգլիական բուրժուական հեղափոխության սկիզբը
դ. Պետրոս Մեծի կողմից նոր մայրաքաղաքի կառուցումը

1) գ, ա, դ, բ
2) գ, դ, բ, ա
3) գ, ա, բ, դ
4) ա, գ, բ, դ

18 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Լոզանի հաշտության պայմանագրի կնքումը
բ. Հիտլերի դառնալը Գերմանիայի ռայխսկանցլեր
գ. ԽՍՀՄ-ի կազմավորումը
դ. Իտալիայի դուրս գալը Ազգերի լիգայից

1) գ, բ, ա, դ
2) ա, բ, գ, դ
3) գ, ա, բ, դ
4) դ, բ, ա, գ

19 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Աշշուր քաղաքի նվաճումը Համմուրապիի կողմից
բ. Վանի թագավորության ստեղծումը
գ. Աբու-Սիմբելի ժայռակերտ տաճարի կառուցումը
դ. Միջին թագավորության ստեղծումը Եգիպտոսում

1) գ, դ, բ, ա
2) դ, գ, ա, բ
3) ա, դ, բ, գ
4) դ, ա, գ, բ

20 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հռոմի պապի աշխարհիկ պետության առաջացումը
բ. Վերդենի դաշնագրի ստորագրումը Լյուդովիկոս Բարեպաշտի որդիների կողմից
գ. Պուատիեի ճակատամարտում արաբների պարտությունը
դ. Կարլոս Մեծի թագադրումը Հռոմում

1) գ, ա, դ, բ
2) բ, ա, դ, գ
3) գ, դ, ա, բ
4) ա, գ, բ, դ

21 **Ո՞ր թվականին է կնքվել Վեստֆալյան հաշտության պայմանագիրը.**

1) 1648 թ.
2) 1618 թ.
3) 1628 թ.
4) 1588 թ.

22 **Ե՞րբ է գահակալել Սալմանասար I–ը.**

1) Ք.ա. 835-825 թթ.
2) Ք.ա. 1263-1234 թթ.
3) Ք.ա. 1233-1197 թթ.
4) Ք.ա. 1279-1213 թթ.

23 **Ե՞րբ է տեղի ունեցել «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում.**

1) 2004 թ.
2) 2005 թ.
3) 2003 թ.
4) 2014 թ.

24 **Ե՞րբ է կնքվել չհարձակման վերաբերյալ խորհրդա-գերմանական համաձայնագիրը.**

1) 1939 թ. օգոստոսի 23
2) 1939 թ. սեպտեմբերի 28
3) 1940 թ. հունիսի 22
4) 1938 թ. սեպտեմբերի 29

25 **Ե՞րբ է Վասկո դա Գամայի արշավախումբը հասել Հնդկաստան.**

1) 1486 թ.
2) 1519 թ.
3) 1498 թ.
4) 1492 թ.

26 **Գաղափարական-քաղաքական ո՞ր ուղղության ներկայացուցիչ էր Էդմունդ Բյորկը.**

1) սոցիալիստական
2) պահպանողական
3) ազատական
4) ազգայնական

27 **Որքա՞ն ռազմատուգանք պետք է վճարեր Գերմանիան ըստ Վերսալյան հաշտության պայմանագրի.**

1) 10 մլրդ մարկ
2) 232 մլրդ մարկ
3) 132 մլրդ մարկ
4) 25 մլրդ մարկ

28 **Թվարկված արքաներից ո՞վ խաչակրաց երրորդ արշավանքի մասնակից չէ.**

1) Ֆրիդրիխ I Բարբարոսա
2) Ռիչարդ I Առյուծասիրտ
3) Գոթֆրիդ Բուլյոնցի
4) Ֆիլիպ II Օգոստոս

29 **Ովքե՞ր էին Միջագետքի հարավի հնագույն բնակիչները.**

1) կասիտներ
2) շումերներ
3) ամորեացիներ
4) քաղդեացիներ

30 **Ո՞վ էր իտալական ֆաշիզմի գաղափարախոսը.**

1) Ջ. Ջենտիլե
2) Բ. Մուսսոլինի
3) Ջ. Մաձինի
4) Ջ. Գարիբալդի

31 **Ի՞նչ հետևանք ունեցավ Պունիկյան երկրորդ պատերազմը.**

1) Մակեդոնիան որպես պետություն վերացավ:
2) Կարթագենը դադարեց գոյություն ունենալուց:
3) Հռոմը նվաճեց Գալլիան:
4) Կարթագենը դադարեց Հռոմի մրցակիցը լինելուց:

32 **Ի՞նչ հետևանք ունեցավ սոցիալիստական համակարգի փլուզումը.**

1) աշխարհում վերացավ պատերազմների վտանգը
2) ստեղծվեց Երրորդ աշխարհը
3) ստեղծվեց միաբևեռ աշխարհակարգ
4) ստեղծվեց Վերսալյան համակարգը

33 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել վերջինը.**

ա. «Խառնակ ժամանակաշրջան»-ը Ռուսաստանում
բ. Բյուզանդիայի կործանումը
գ. Նիդերլանդական հեղափոխության սկիզբը
դ. Խորհրդարանի ստեղծումը Անգլիայում
ե. Գլխավոր շտատների ստեղծումը Ֆրանսիայում

1) դ
2) ե
3) ա
4) բ

34 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Իտալիայի հռչակվելը թագավորություն
բ. Փարիզի կոմունայի ստեղծումը
գ. Ավստրո-Հունգարիա երկմիասնական կայսրության ստեղծումը
դ. Թանզիմաթի սկիզբը Օսմանյան կայսրությունում
ե. Բաբիների շարժման սկիզբը

1) ե, գ, դ, ա, բ
2) դ, ե, ա, գ, բ
3) դ, ե, գ, ա, բ
4) ե, դ, ա, բ, գ

35 **Ո՞վ է ասել հետևյալ խոսքը՝ դատարանից դուրս գալով.**

«Բայց, այնուամենայնիվ, Երկիրը պտտվում է»:

1) Գալիլեյը
2) Բեկոնը
3) Բրունոն
4) Կոպեռնիկոսը

36 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

«Մենք հետ ենք մնացել առաջատար երկրներից 50–100 տարով… Մենք պետք է այդ հեռավորությունը վազելով անցնենք տասը տարում: Կա՛մ մենք կանենք դա, կա՛մ մեզ կճզմեն»:

1) Հիտլերը
2) Լենինը
3) Ստալինը
4) Աթաթուրքը

37 **Անունը համապատասխանեցնել մասնագիտության հետ.**

1. քանդակագործ
2. աստղագետ
3. փիլիսոփա
4. պատմագիր

ա. Հոմերոս
բ. Պլատոն
գ. Ապպիանոս
դ. Պտղոմեոս
ե. Ֆիդիաս

1) 1–ե, 2–բ, 3–ա, 4–գ
2) 1–ե, 2–դ, 3–բ, 4–գ
3) 1–դ, 2–գ, 3–ա, 4–բ
4) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ա

38 **Կատարել համապատասխանեցում.**

Քաղաք	*Պետություն*
1. Ախետաթոն	ա. Շումեր
2. Տեյմա	բ. Ասորեստան
3. Շոշ	գ. Եգիպտոս
4. Նինվե	դ. Աքեմենյան տերություն
	ե. Նոր Բաբելոնիա

1) 1–գ, 2–ե, 3–բ, 4–ա
2) 1–ե, 2–ա, 3–դ, 4–բ
3) 1–գ, 2–դ, 3–ա, 4–բ
4) 1–գ, 2–ե, 3–դ, 4–բ

39 **Ո՞ր քաղաքում է կառուցվել առաջին զիկուրատը.**

1) Պերսեպոլիս
2) Ավարիս
3) Ուրուկ
4) Բաբելոն

40 **Թվարկվածներից ո՞վ է իտալական Վաղ վերածննդի ներկայացուցիչ.**

1) Լեոնարդո դա Վինչի
2) Դանթե Ալիգիերի
3) Ռաֆայել Սանտի
4) Կամպանելա

41 **Ո՞րն էր 1911 թ. օրենքով Անգլիայի խորհրդարանի Լորդերի ատյանին երկրի բյուջեն հաստատելու իրավունքից զրկելու պատճառը.**

1) թագավորի իշխանության ընդլայնումը
2) բարեփոխումների նկատմամբ Լորդերի ատյանի մշտական ընդդիմադիր լինելը
3) Համայնքների ատյանի դերի նվազումը
4) երկկուսակցական համակարգի հաստատումը

42 **Թվարկվածներից ո՞րը Արևմտյան Եվրոպայի որոշ երկրներում բացարձակ միապետության առաջացման պատճառ չէ.**

1) Ազնվականության մեծ մասի գոյության հիմնական աղբյուրը բարձր վարձատրվող պաշտոններն էին, որոնց նշանակումը միապետի ձեռքում էր, ուստի ազնվականները ենթարկվեցին միապետի կամքին:
2) Կաթոլիկ եկեղեցու դիրքերի թուլացումը, եկեղեցու ենթարկումը պետությանը, Ռեֆորմացիան և աշխարհիկ մտավորական խավի առաջացումը կախման մեջ դրեցին հոգևորականներին միապետից:
3) Առևտրականներն ու արդյունաբերողները զգում էին պետության հովանավորության կարիքը, ուստի նրանք համախմբվեցին միապետի շուրջը:
4) Բարձր վերածննդի գաղափարները մեծ տարածում գտան հասարակության բոլոր դասերի մեջ:

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. երիտթուրքերի հեղաշրջումը
բ. Բալկանյան երկրորդ պատերազմը
գ. անգլո-բուրական պատերազմը
դ. Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքումը
ե. ռուս-ճապոնական պատերազմը

1) գ, դ, ա, ե, բ
2) դ, գ, բ, ե, ա
3) դ, գ, ե, ա, բ
4) գ, դ, ե, բ, ա

44 **Քաղաքական կուրսերը դասավորել ըստ դրանց գործադրման ժամանակագրական հաջորդականության.**

ա. «Նոր կուրս»
բ. նէպ
գ. վերակառուցում
դ. «Ռազմական կոմունիզմ»

1) դ, բ, ա, գ
2) գ, դ, բ, ա
3) գ, ա, բ, դ
4) դ, ա, գ, բ

45 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել չորրորդը.**

ա. Երկրորդ եռապետության ստեղծումը Հռոմում
բ. Ներոն կայսրի ինքնասպան լինելը
գ. Հռոմի գրավումը Կեսարի կողմից
դ. Մակեդոնիայի նվաճումը Հռոմի կողմից
ե. Սուլլայի դառնալը դիկտատոր

1) ա
2) դ
3) բ
4) գ

46 **Մշակութային գործչի անունը համապատասխանեցնել գեղարվեստական ուղղության հետ.**

1. բարոկկո	ա. Ժ. Մոլիեր
2. կլասիցիզմ	բ. Ա. Պուշկին
3. ռոմանտիզմ	գ. Ա. Դյումա
4. նատուրալիզմ	դ. Պ. Ռուբենս
5. իմպրեսիոնիզմ	ե. Գ. Կուրբե
	զ. Կ. Մոնե

1) 1–ա, 2–դ, 3–գ, 4–ե, 5-զ
2) 1–դ, 2–ա, 3–գ, 4–ե, 5-զ
3) 1–դ, 2–բ, 3–զ, 4–ա, 5-ե
4) 1–ե, 2–գ, 3–զ, 4–ա, 5-դ

47 **Պաշտոնը համապատասխանեցնել այն զբաղեցրած գործչի անվան հետ.**

1. Ժ.Կլեմանսո	ա. Մեծ Բրիտանիայի վարչապետ
2. Օռլանդո	բ. Ավստրիայի վարչապետ
3. Կ. Ադենաուեր	գ. Իտալիայի վարչապետ
4. Լ. Ջորջ	դ. Ֆրանսիայի վարչապետ
	ե. ԳԴՀ-ի վարչապետ

1) 1–դ, 2–գ, 3–բ, 4–ա
2) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ա
3) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ե
4) 1–դ, 2–գ, 3–ե, 4–ա

48 **Անունը համապատասխանեցնել իրադարձության հետ.**

1. Մանդատային համակարգի ներմուծում
2. Կարիբյան ճգնաժամ
3. Պոտսդամի համաժողով
4. Երկրորդ ճակատի բացում
5. Գերմանիայի վերամիավորում

ա. Հ. Քոլ
բ. Ք. Քուլիջ
գ. Ջ. Քենեդի
դ. Դ. Էյզենհաուեր
ե. Վ. Վիլսոն
զ. Կ.Էտլի

1) 1–ե, 2–բ, 3–զ, 4–գ, 5-դ
2) 1–զ, 2–բ, 3–գ, 4–դ, 5-ա
3) 1–ե, 2–գ, 3–զ, 4–դ, 5-ա
4) 1–զ, 2–գ, 3–բ, 4–ե, 5-դ

49 **Ժամանակաշրջանը համապատասխանեցնել իրադարձության կամ երևույթի հետ.**

1. Սքոլաստիկայի ձևավորում
2. Առաջին գիտական հեղափոխություն
3. Մուսուլմանական վերածնունդ
4. Բարձր վերածնունդ
5. Աշխարհագրական մեծ հայտնագործությունների սկիզբ

ա. XVI դար
բ. XI-XIII դարեր
գ. XV դարի կեսեր
դ. XVI-XVII դարեր
ե. VII-X դարեր
զ. XIV դար

1) 1–բ, 2–դ, 3–ե, 4–ա, 5-գ
2) 1–զ, 2–ա, 3–բ, 4–դ, 5-ե
3) 1–զ, 2–դ, 3–գ, 4–ա, 5-բ
4) 1–բ, 2–ա, 3–ե, 4–զ, 5-գ

50 **Պետության անունը համապատասխանեցնել գահակալի անվանը.**

1. Օտտոն I
2. Ֆիլիպ IV
3. Իսահակ II Անգելոս
4. Մուրադ I
5. Խոսրով I

ա. Բյուզանդիա
բ. Սասանյան տերություն
գ. Գերմանական թագավորություն
դ. Ֆրանսիա
ե. Օսմանյան պետություն
զ. Իտալիա

1) 1–գ, 2–դ, 3–զ, 4–ե, 5-բ
2) 1–գ, 2–դ, 3–ա, 4–ե, 5-բ
3) 1–դ, 2–գ, 3–զ, 4–բ, 5-ա
4) 1–գ, 2–ա, 3–զ, 4–բ, 5-ե

51 **Արևմտաեվրոպական երկրների տնտեսության մեջ զարգացած միջնադարում կատարված փոփոխությունների մասին պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Արհեստները մասնատվեցին նոր ճյուղերի:
2) Լայնորեն տարածվեց եռադաշտային համակարգը:
3) Արհեստագործությունը դարձավ տնտեսության գլխավոր ճյուղը:
4) Գյուղացիները սկսեցին հարկեր վճարել նաև դրամով:

52 **Լուսավորական շարժմանը վերաբերող պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Նրա գաղափարախոսները իշխանության աղբյուր էին համարում աստծուն:
2) Շարժման կենտրոնը Իտալիան էր:
3) Նրա գաղափարախոսները պաշտպանում էին ավատատիրական կարգերը:
4) Շարժումը խթանեց գիտության և մշակույթի զարգացումը:

53 **Դարեհ I-ի գործունեությանը վերաբերող փաստերից ո՞րն է սխալ.**

1) Հպատակեցրեց Մակեդոնիան:
2) Նվաճեց Հունաստանը:
3) Կառուցել տվեց «Արքայական ճանապարհը»:
4) Իր տերության տարածքը բաժանեց 20 սատրապությունների:

54 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից ո՞րն է սխալ.**

1) Օստրակիզմը Ատտիկայում տարածված երևույթ էր, ըստ որի՝ էկլեսիան որոշում էր պետական իշխանությունը հանձնել մեծ հեղինակություն վայելող քաղաքացուն:
2) Օգոստոսի գահակալությամբ սկսված Հռոմի պատմության նոր փուլը հայտնի է պրինցիպատ անվանումով:
3) Օլիգարխիա հունարեն նշանակում է քչերի իշխանություն:
4) Հին Հունաստանում միանձնյա կառավարման եղանակը կոչվում էր տիրանիա:

55 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ.**

1) Ֆրանսիայում 1688-1689 թթ. տեղի ունեցած փոփոխությունները հայտնի են «Փառահեղ հեղափոխություն» անվանումով:
2) Անգլիայի պատմությունից հայտնի զանգվածային շարժումը, որի նպատակն էր հասնել տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի իրագործմանը, կոչվում է չարտիզմ:
3) Սոցիալիզմ նշանակում է ազգայնականություն:
4) Շովինիզմը ազգայնամոլության դրսևորում է, որը առաջադիմական բնույթ ունի:

56 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է սխալ.**

1) Երկրորդ աշխարհամարտի Արևմտյան ճակատի 1939 թ.սեպտեմբերից մինչև 1940 թ. մայիս պատերազմաշրջանն ստացել է «տարօրինակ պատերազմ» անունը, որովհետև այդտեղ ակտիվ ռազմական գործողություններ չեն մղվել:
2) Ամբողջատիրությունը ժողովրդավարական վարչակարգ է, որը հայտնի է տոտալիտարիզմ անունով:
3) Առաջին աշխարհամարտից հետո հաստատված աշխարհակարգը հայտնի է Վերսալ-վաշինգտոնյան համակարգ անունով:
4) ԽՍՀՄ-ում ստեղծված նոր հասարակարգն այլ կերպ անվանել են նաև «պետական սոցիալիզմ»:

57 **Թվարկվածներից որո՞նք ԱՄՆ-ի պատմության «բարգավաճման ժամանակաշրջան»-ին բնորոշ հետևանքներ չեն.**

ա. Կառավարությունը վերացրեց պատերազմի ժամանակ գերշահույթների վրա դրված հարկերը:
բ. Աճեցին մարդկանց աշխատավարձերը:
գ. Սրվեց ներքաղաքական պայքարը:
դ. Ավտոմեքենան մատչելի դարձավ միջին խավի ամերիկացիների համար:
ե. Երկրում վերացավ գործազրկությունը:
զ. Բիզնեսմենը դարձավ ամերիկացիների «բարձրագույն հեղինակությունը»:
է. ԱՄՆ-ը դարձավ կապիտալիստական աշխարհի հզորագույն պետությունը:

1) բ, ե, զ
2) ա, դ, է
3) գ, ե, է
4) ա, գ, ե

58 **Թվարկվածներից ո՞րը խաչակրաց արշավանքների հետևանք չէ.**

1) Միջերկրածովյան առևտրում թուլացավ իտալական քաղաքների դերը:
2) Ի պատասխան խաչակրության՝ մուսուլմանական աշխարհում ձևավորվեց Սրբազան պատերազմի գաղափարախոսություն:
3) Ավերվեցին ու կործանվեցին բազմաթիվ քաղաքներ ու մշակութային արժեքներ:
4) Ավելի խորացան հակասությունները կաթոլիկ և բյուզանդական եկեղեցիների միջև:

59 **Թվարկվածներից որո՞նք են Առաջին աշխարհամարտի պատճառներ.**

ա. Մեծ տարածում էր գտել ժողովրդավարական շարժումը:
բ. Ստեղծվել էր աշխարհում առաջին խորհրդային պետությունը, որը ձգտում էր տարածել սոցիալիստական հեղափոխությունը:
գ. Ազգայնականությունը շատ երկրներում վերաճել էր ազգայնամոլության:
դ. Սրվել էր տերությունների միջև պայքարը սպառման շուկաների համար:
ե. Թուլացել էր Ազգերի լիգայի դերը խաղաղության պահպանման գործում:
զ. Տերությունների միջև սրվել էր պայքարը բաժանված աշխարհի տարածքային վերաբաժանման համար:
է. Ստեղծվել էր ռազմատենչ Քառյակ միությունը:

1) ա, դ, զ
2) գ, ե, է
3) գ, դ, զ
4) բ, ե, է

60 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

ա. Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրության վերացումը
բ. Համընդհանուր ընտրական իրավունքի հաստատումը Մեծ Բրիտանիայում
գ. Առաջին աշխարհամարտի սկիզբը
դ. ԱՄՆ-ի Անկախության հռչակագրի ընդունումը
ե. Ֆրանսիայի Երրորդ հանրապետության սահմանադրության հաստատումը
զ. Օ. Կրոմվելի կողմից պրոտեկտորատի ստեղծումը
է. Ճորտության վերացումը Ռուսաստանում

1) ա
2) է
3) բ
4) ե

61 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երրորդը.**

ա. Իվան Ահեղի թագադրումը և ցարի տիտղոս ընդունելը
բ. ինկվիզիցիայի ստեղծումը
գ. Աբբասյանների խալիֆայության վերացումը
դ. Թեմուչինի հռչակվելը համամոնղոլական տիրակալ
ե. Իկոնիայի սուլթանության ստեղծումը
զ. Կուլիկովոյի ճակատամարտը
է. «Բարդուղիմեոսյան գիշերը» Փարիզում

1) գ
2) բ
3) դ
4) զ

62 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել առաջինը.**

ա. Պելոպոնեսյան պատերազմների սկիզբը
բ. Կյուրոս Կրտսերի ապստամբությունը Արտաքսերքսես II-ի դեմ
գ. Սելևկյան պետության ստեղծումը
դ. Մագնեսիայի ճակատամարտը
ե. Գավգամելայի ճակատամարտը
զ. Բաբելոնիայի գրավումը Կյուրոս Մեծի զորքի կողմից

1) զ
2) ե
3) գ
4) բ

63 **Մեջբերված ասույթներից որի՞ հեղինակը չէ Ուինսթոն Չերչիլը.**

1) «Գեներալները միշտ պատրաստվում են նախորդ պատերազմին»:
2) «Մի՛ հարցրեք, թե ինչ կարող է անել ձեզ համար ձեր հայրենիքը, այլ հարցրե՛ք, թե ինչ կարող եք անել դուք ձեր հայրենիքի համար»:
3) «Պետական գործիչը տարբերվում է քաղաքական գործչից նրանով, որ քաղաքական գործիչը կողմնորոշվում է դեպի հաջորդ ընտրությունները, իսկ պետական գործիչը՝ դեպի հաջորդ սերունդը»:
4) «Ավելի լավ է կերտել նորությունները, քան պատմել դրանց մասին»:

64 **Ո՞վ է թևավոր դարձած այս արտահայտության հեղինակը.**

«Նպատակը արդարացնում է միջոցները»:

1) Սերվանտես
2) Մաքիավելի
3) Ռաբլե
4) Շեքսպիր

65 **Կատարել համապատասխանեցում.**

Փաստ	*Թվաքանակ*
ա. Բաբելոն քաղաքի բնակչության թիվը	1. 10 000
Նաբուգոդոնոսոր II-ի օրոք	2. 250 000
բ. Ալեքսանդր Մակեդոնացու զորքի ընդհանուր թիվը	3. 200 000
Աքեմենյան տերության դեմ արշավանքի սկզբին	4. 50 000
գ. Հռոմեական բանակի թիվը Օգոստոս կայսեր օրոք	5. 35 000
դ. Աքեմենյան տերության «Անմահների գնդի» մարտիկների թիվը	6. 100 000
ե. Հռոմի Կոլիզեում ամֆիթատրոնի հանդիսականների տեղերի քանակը	

1) ա–3, բ–5, գ–2, դ–4, ե–6
2) ա–2, բ–4, գ–3, դ–5, ե–6
3) ա–3, բ–5, գ–2, դ–1, ե–4
4) ա–2, բ–6, գ–3, դ–1, ե–4

66 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Նա վաղ միջնադարի կրթական գործի կազմակերպիչներից է:
բ. Նա հրապարակել է Նանտի էդիկտը:
գ. Նա ստեղծել է մուսուլմանական առաջին պետությունը:
դ. Նա գլխավորել է Իսպանիայի տիրապետության դեմ ուղղված Նիդերլանդների ապստամբությունը:
ե. Բաղդադի խալիֆան նրան շնորհել է «Արևելքի և Արևմուտքի սուլթան» տիտղոսը:
զ. Նա գրավել է Կոստանդնուպոլիսը և վերացրել Բյուզանդական կայսրությունը:

1. Վիլհելմ I Օրանցի
2. Մեհմեդ II
3. Մուհամեդ
4. Բոեցիոս
5. Հենրիխ IV
6. Օսման բեյ
7. Տուղրիլ

1) ա–4, բ–1, գ–3, դ–5, ե–7, զ–6
2) ա–3, բ–5, գ–7, դ–4, ե–6, զ–2
3) ա–4, բ–5, գ–7, դ–1, ե–2, զ–6
4) ա–4, բ–5, գ–3, դ–1, ե–7, զ–2

67 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Ֆաշիզմի նկատմամբ տարած հաղթանակի գործում ունեցած ներդրման շնորհիվ աշխարհում աննախադեպ աճել էր ԽՍՀՄ-ի դերը:
բ. Մարշալի պլանի համաձայն՝ ԱՄՆ-ը 1948-1951 թթ. 25 մլրդ դոլար օգնություն է հատկացրել Արևմտյան Եվրոպայի երկրներին:
գ. ԽՍՀՄ-ի շուրջ արևելաեվրոպական սոցիալիստական երկրների ռազմաքաղաքական խմբավորումը պաշտոնապես ձևակերպվել էր 1950 թ. Վարշավայում:
դ. Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ-ի ստեղծման պայմանագիրը ստորագրվել է Վաշինգտոնում 12 երկրների կողմից:
ե. Ֆրանսիացի գրող և փիլիսոփա Ժան Պոլ Սարտրը հրաժարվել է 1964 թ. իրեն շնորհված Նոբելյան մրցանակից:
զ. Պաբլո Պիկասոն և Ժորժ Բրակը հիմնադրել են ավանգարդիստական ուղղության ֆուտուրիզմ կոչվող հոսանքը:
է. Զանգվածային մշակույթը միայն բացասական դրսևորումներ ունի:

1) ա, դ, ե
2) ա, դ, է
3) գ, ե, զ
4) բ, գ, զ

68 **Ստորև թվարկված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Երեսնամյա պատերազմն ավարտվել է Հաբսբուրգների պարտությամբ, իսկ Շվեյցարիան դարձել է Եվրոպայի ամենահզոր երկիրը:
բ. Սոցիալիզմի ուսմունքի ստեղծողներից էին Անրի Սեն-Սիմոնը և Ռոբերտ Օուենը:
գ. Ավստրո-Հունգարիա երկմիասնական պետության գլուխ էր համարվում երկպալատ խորհրդարանի նախագահը:
դ. Եկատերինա II կայսրուհու օրոք Ռուսաստանում ընդունվել է օրենք ազատ ձեռներեցության մասին:
ե. ԱՄՆ-ում ստրկության վերացման գործում մեծ դեր է խաղացել նախագահ Աբրահամ Լինկոլնը:
զ. Պատերազմներն իրենց բնույթով լինում են միայն անարդարացի:
է. ԱՄՆ-ը Առաջին աշխարհամարտի ժամանակ չմիացավ պատերազմող որևէ կողմի:

1) բ, դ, է
2) բ, դ, ե
3) ա, ե, զ
4) ա, գ, է

69 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Աթենական պետության արքոնտ Սոլոնը վերացրել է պարտային ստրկությունը:
բ. Հին Աթենքում ատենակալների դատարանը ստեղծել է Կլիսթենեսը:
գ. Պերիկլեսը պաշտոնյաների համար մտցրել է վարձատրություն:
դ. Հին Սպարտայում լիարժեք քաղաքացիներ էին համարվում սպարտիատները և պերիոյկոսները:
ե. Պելոպոնեսյան պատերազմների ավարտին կնքված պայմանագրով Աթենական միությունը ցրվել է, իսկ Աթենքն ընդունել է Սպարտայի գերիշխանությունը:
զ. Ապամեայի հաշտության պայմանագրով Անտիոքոս II-ը Հռոմին է հանձնել Հաննիբալին:
է. Հուլիոս Կեսարը Ք.ա. 44 թ. հռչակվել է ցմահ դիկտատոր:

1) գ, դ, ե
2) ա, բ, է
3) բ, դ, զ
4) բ, գ, զ

70 **Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Մարքսի և նրա հետևորդների ստեղծած կուսակցությունները հայտնի են սոցիալիստ-ազատականներ անունով:
բ. Պահպանողական ուղղության հետևորդներին այլ կերպ անվանում են նաև համայնավարներ:
գ. Ֆրանսիական Մեծ հեղափոխության սկզբում ընտրված Դասային համաժողովը կոչվեց Ազգային ժողով, ապա՝ Սահմանադիր ժողով:
դ. Իտալիայում XVIII դ. վերջից սկսված հզոր շարժումը կոչվում էր Ռիսորջիմենտո, որը նշանակում է Վերածնություն:
ե. 1871 թ. ստեղծված Գերմանական կայսրությունը իր կառավարման համակարգով բացարձակ միապետություն էր:
զ. ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների նախագիծը ստացել է «նոր ազգայնականություն» անվանումը:
է. Արևելյան հարցը Ռուսական կայսրության հպատակ ազգերի ազատագրման հիմնախնդիրների ամբողջությունն է:

1) գ, դ, զ
2) բ, ե, զ
3) բ, դ, ե
4) ա, գ, է

71 **Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. ԽՍՀՄ-ում 1942 թ. հունիսի 30-ին ստեղծված պետական մարմինը կոչվում էր Պաշտպանության պետական կոմիտե, որը գլխավորում էր մարշալ Գ. Ժուկովը:
բ. Ֆրանսիայի պատմության 1946-1958 թթ. շրջանը հայտնի է Չորրորդ հանրապետություն անունով:
գ. ԱՄՆ-ում 1960-ական թթ. սկսված կոմունիստական արշավը ստացել է մաքքարտիզմ անվանումը:
դ. Հոլանդիայի Մաաստրիխտ քաղաքում 1992 թ. ստորագրված պայմանագրով կազմավորված պետությունների միավորումը կոչվում է Եվրոպական միություն:
ե. Մշակութային մոդեռնիստական ուղղություններից է ավանգարդիզմը, որի անվանումն առաջացել է ֆրանսերեն ավանգարդ (առաջապահ ջոկատ) բառից:
զ. Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում առաջացած միջազգային նոր կազմավորումը հայտնի է Ինքնիշխան պետությունների միություն անունով:
է. Չճանաչված են կոչվում այն երկրները, որոնք թեև ճանաչվել են ՄԱԿ-ի կողմից, սակայն նրա Անվտանգության խորհրդի անդամ չեն:

1) ա, զ, է
2) ա, բ, ե
3) գ, դ, է
4) բ, դ, ե

72 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Զրադաշտականությունը դուալիստական ուսմունք է, որի առանցքը Աստծո և Դևի, Բարու և Չարի, Լույսի և խավարի պայքարն է:
բ. Բուդդայական դավանանքին բնորոշ է մեսիայի միջոցով փրկության հասնելու գաղափարը:
գ. Այն արարողությունը, որի ժամանակ սենյորը ավատը հանձնում էր վասալին, կոչվում էր լիթուրգիա:
դ. Հերետիկոսների կատարներ կոչվող ուղղության անվանումն առաջացել է հունարեն «կատարներ» բառից, որը նշանակում է «մաքուրներ»:
ե. Միջնադարում առևտրականները միավորվում էին հատուկ կազմակերպությունների մեջ, որոնք կոչվում էին գիլդիաներ:
զ. Ռուսաստանում ստեղծված դասային ներկայացուցչական ժողովը կոչվում էր վեչե:
է. Ֆրանսիայի հարավի կալվինականներին անվանում էին նաև հուգենոտներ, որը գերմաներեն նշանակում է՝ «համատեղ երդում տվածներ»:

1) ա, գ, զ
2) բ, գ, զ
3) ա, բ, ե
4) բ, դ, է

73 **Պատմական իրադարձությունների և երևույթների թվարկված պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են սխալ.**

ա. Առաջին աշխարհամարտի հետևանքով փլուզվել են չորս կայսրություններ՝ Ռուսաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան:
բ. Առաջին աշխարհամարտի հասարակական-քաղաքական գլխավոր հետևանքը Խորհրդային Ռուսաստան պետության ստեղծումն էր:
գ. Երկրորդ աշխարհամարտի գլխավոր պատճառներից մեկը տերությունների միջև եղած տնտեսական հակամարտությունն էր:
դ. Երկրորդ աշխարհամարտի նախօրեին հավաքական անվտանգության համակարգ ստեղծելու ԽՍՀՄ ջանքերը հաջողեցին, որովհետև Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան ամեն կերպ փորձում էին զսպել ֆաշիստական խմբավորման ծավալապաշտությունը:
ե. Ստալինգրադի ճակատամարտի գլխավոր հետևանքը արմատական բեկման սկիզբն էր աշխարհամարտի ընթացքում հօգուտ ԽՍՀՄ-ի և նրա դաշնակիցների:
զ. Կուրսկի ճակատամարտում Կարմիր բանակի հաղթանակի հետևանքով հօդս ցնդեց Հիտլերի հաստատած կայծակնային պատերազմի «Բարբարոսա պլանը»:
է. Առավելապես Մեծ Բրիտանիայի պատճառով Պոտսդամի խորհրդաժողովում Թուրքիայի հանդեպ ԽՍՀՄ տարածքային պահանջների հարցը չլուծվեց:

1) բ, ե, է
2) գ, դ, զ
3) ա, բ, ե
4) ա, դ, զ

74 **Պատմական իրադարձությունների և երևույթների թվարկված պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով կործանվել է Բաբելոնիա տերությունը:
բ. Ալեքսանդր Մեծը չի կարողացել գրավել Եգիպտոսը, որովհետև նրա զինվորները հոգնել էին երկարատև պատերազմից և հրաժարվեցին շարունակել արշավանքը:
գ. Ալեքսանդրի արշավանքների հետևանքով սկսվել է պատմության նոր՝ հելլենիստական դարաշրջանը:
դ. Հելլենիստական դարաշրջանում պատմության մեջ առաջին անգամ վերացել են Եվրոպայի արևելքի և արևմուտքի միջև առկա ազգային տարբերությունները:
ե. Հելլենիզմի շրջանում արևելյան և արևմտյան կրոնները սերտացան ու միաձուլվեցին:
զ. Դիոկղետիանոս կայսրի բարեփոխումների արդյունքում Հռոմեական տերությունում ավարտվել է պրինցիպատը և հիմք է դրվել կառավարման նոր եղանակին՝ դոմինատին:
է. Վեստգոթերը Ալարիխի գլխավորությամբ ավերեցին Հռոմը, որի հետևանքով 20 տարի անց թուլացած կայսրությունը ամբողջությամբ կործանվեց:

1) գ, դ, զ
2) գ, ե, զ
3) բ, գ, ե
4) ա, դ, է

75 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ուսամա բեն Լադենի կողմից կազմակերպված ահաբեկչությունը Նյու Յորքում
բ. ԽՍՀՄ-ի փլուզումը
գ. Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետության ստեղծումը
դ. Շառլ դը Գոլի հրաժարական տալը նախագահի պաշտոնից
ե. ռուս-վրացական պատերազմը Հարավային Օսիայի համար
զ. ԱՊՀ կանոնադրության ընդունումը

1) գ, դ, բ, զ, ա, ե
2) գ, բ, դ, զ, ե, ա
3) դ, գ, ե, ա, զ, ե
4) դ, գ, բ, ե, զ, ա

76 **Գահակալների (կայսր, շահ, սուլթան) անունները դասավորել ըստ նրանց գահակալման սկզբի ժամանակագրական հաջորդականության.**

ա. Ալեքսանդր II
բ. Նապոլեոն I
գ. Պետրոս Մեծ
դ. Աբդուլ Համիդ II
ե. Նապոլեոն III
զ. Եկատերինա II
է. Աղա Մոհամմադ
ը. Ալեքսանդր I

1) է, գ, զ, բ, ը, ա, ե, դ
2) գ, է, զ, բ, ը, ե, դ, ա
3) գ, զ, է, ը, բ, ե, ա, դ
4) է, գ, զ, ը, բ, ե, դ, ա

77 **Հեղինակի անունը համապատասխանեցնել աշխատության կամ կտավի անվան հետ.**

ա. «Ինքնանկար»	1. Ռաֆայել Սանտի
բ. «Գոթերի պատմությունը»	2. Ռեմբրանդտ
գ. «Սիքստինյան Տիրամայրը»	3. Սանդրո Բոտիչելի
դ. «Աստվածաբանության հանրագումար»	4. Կամպանելա
	5. Ալբրեխտ Դյուրեր
ե. «Ուտոպիա»	6. Լեոնարդո դա Վինչի
զ. «Անառակ որդու վերադարձը»	7. Ֆրենսիս Բեկոն
է. «Գարուն»	8. Թովմա Աքվինացի
ը. «Ջոկոնդա»	9. Թոմաս Մոր
թ. «Նոր օրգանոն»	10. Կասիոդոր

1) ա–3, բ–10, գ–1, դ–7, ե–9, զ–2, է–5, ը-6, թ-8
2) ա–5, բ–9, գ–2, դ–10, ե–4, զ–6, է–3, ը-1, թ-8
3) ա–5, բ–10, գ–1, դ–8, ե–9, զ–2, է–3, ը-6, թ-7
4) ա–1, բ–9, գ–6, դ–8, ե–4, զ–5, է–2, ը-3, թ-7

78 **Անունը համապատասխանեցնել իրադարձության կամ երևույթի հետ.**

ա. Նա XIX դ. երկրորդ կեսին Իրանում հայտնի բարենորոգիչ էր:
բ. Նրա օրոք գումարվել է առաջին օսմանյան խորհրդարանը:
գ. Նրա ղեկավարությամբ Մեծ Բրիտանիայում 1924 թ. ձևավորվել է կառավարություն:
դ. Նրա անվան հետ է կապվում սառը պատերազմի սկիզբը:
ե. Նա բացահայտել է համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամի խորքային պատճառները:
զ. Նա վերացրել է օսմանյան բանակի ենիչերիական ստորաբաժանումները:
է. Նա «Մյունխենյան գործարք»-ի մասնակից է:
ը. Նա Մ. Թետչերին փոխարինած չափավոր պահպանողական վարչապետն էր:

1. Չեմբեռլեն
2. Մահմուդ II
3. Մալքոմ խան
4. Ջ. Քեյնս
5. Ռ. Մակդոնալդ
6. Ու. Չերչիլ
7. Եփրեմ խան
8. Ջ. Մեյջոր
9. Աբդուլ Համիդ II

1) ա–7, բ–9, գ–8, դ–6, ե–4, զ–2, է–5, ը–1
2) ա–3, բ–2, գ–4, դ–6, ե–8, զ–9, է–5, ը–1
3) ա–7, բ–2, գ–4, դ–5, ե–6, զ–9, է–1, ը–8
4) ա–3, բ–9, գ–5, դ–6, ե–4, զ–2, է–1, ը–8

79 **Կատարել համապատասխանեցում.**

Թվաքանակ

1. 36 մլն
2. 65 մլն
3. 27 մլն
4. 7 մլն
5. 110 մլն
6. 5,5 մլն

Փաստ

ա. ԽՍՀՄ քաղաքային բնակչության թիվը 1939 թ. մարդահամարի տվյալներով
բ. ԽՍՀՄ-ում 1932-1933 թթ. սովից մահացածների թիվը
գ. ԽՍՀՄ մարդկային կորուստները Երկրորդ աշխարհամարտում
դ. Ռուսաստանի բնակչության թիվը XIX դ. սկզբին
ե. Երկրորդ աշխարհամարտի ընթացքում զոհվածների թիվը
զ. Գերմանիայի և նրա դաշնակիցների զորքերի թիվը ԽՍՀՄ ներխուժելիս
է. Երկրորդ աշխարհամարտի ընթացքում բանակ զորակոչվածների թիվը

1) 1–դ, 2–ե, 3–գ, 4–բ, 5–է, 6-զ
2) 1–գ, 2–ե, 3–զ, 4–ա, 5–դ, 6-բ
3) 1–գ, 2–զ, 3–ե, 4–բ, 5–է, 6-ա
4) 1–դ, 2–ե, 3–գ, 4–ա, 5–բ, 6-զ

80 **Տարեթիվը համապատասխանեցնել ճակատամարտի անվան հետ.**

ա. Իսթմոսի ճակատամարտ	1. Ք.ա. 480 թ.
բ. Ադրիանուպոլսի ճակատամարտ	2. Ք.ա. 197 թ.
գ. Բեոտիայի Պլատեա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտ	3. 486 թ.
դ. Իսոս քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտ	4. Ք.ա. 338 թ.
ե. Կատալաունյան դաշտում տեղի ունեցած ճակատամարտ	5. 378 թ.
զ. Բեոտիայի Քերոնեա բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտ	6. Ք.ա. 333 թ.
է. Թեսալիայի Կինոսկեֆալե վայրում տեղի ունեցած ճակատամարտ	7. Ք.ա. 146 թ.
ը. Սուասոն քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտ	8. 451 թ.
թ. Սալամին կղզու մոտ տեղի ունեցած ծովամարտ	9. Ք.ա. 479 թ.
	10. Ք.ա. 334 թ.

1) ա–6, բ–8, գ–9, դ–10, ե–3, զ–4, է–7, ը–5, թ-1
2) ա–7, բ–5, գ–9, դ–6, ե–8, զ–4, է–2, ը–3, թ-1
3) ա–7, բ–5, գ–4, դ–6, ե–8, զ–1, է–10, ը–3, թ-9
4) ա–6, բ–5, գ–4, դ–7, ե–3, զ–10, է–2, ը–8, թ-9